շատակ երկուց ազգացս։ Եւ մեք համառօտիւք սկսցուք ասել զառաջնորդս նոցա մինչեւ ցայս վայր, որ թողաւս։

Արդ առաջին պատճառ լուսաւորութեան կողմանցն Արեւելից ասեն զսուրբն Գրիգոր զաշակերտ մեծին Թադէոսի առաքելոյն, որ յետ մահուան սրբոյ առաքելոյն գնացեալ յԵրուսաղէմ առ Յակոբոս եղբայրն Տեառն, և ի նմանէ ձեռնադրեալ եպիսկոպոս, գալ ընդ աշխարհն Պարսից, և հասանէ յաշխարհն Աղուանից. գալ՝ նա ի տեղի մի անուանեալ Գիս, և անդ շինէ եկեղեցի, և ինքն կատարի անդէն նահատակութեամբ անյայտ թէ յումմէ, և եղեւ ընկեցեալ ի ջրհոր մի ընդ այլ բազում դիականց. և անդ եկաց մինչեւ յաւուրս բարեպաշտ արքային Վաչագանայ վերջինս։ Եւ այս են թագաւորք Աղուանից ի զարմից Հայկայ յազգաբանութենէն Առանայ, զոր կարգեաց Վաղարշակ Պարթեւ վերակացու և իշխան կողմանցն այնոցիկ։ Առաջին Վաչագան, Վաչէ, Ուռնայր։ Սա եկեալ առ մեծ արքայն Հայոց Տրդատ, և առ սուրբն Գրիգորիս, մկրտի ի նմանէ։ Եւ ձեռնադրէ սուրբ Գրիգոր զայր մի ի սպասաւորաց իւրոց եպիսկոպոս, որ եկեալ էր ընդ նմա ի Հռոմայ, և տայ զնա Ուռնայրի արքայի, Յաւզագան, Միրհաւան, Սաստրասաէս, Վաղէն։ Յաւուրս սորա արար գիր Մեսրոպ երանելի Հայոց, Վրաց և Աղուանից։ Վաչէ, զսա բռնութեամբ մոգ արար Ազկերտ արքայ, որ կոտորեաց զսուրբ Վարդանանքն, և յետոյ թողեալ զմոգութիւնն, ընդ նմին և զթագաւորութիւնն, կրօնաւորեալ եկաց խստակրօն վարուք, և հաշտեցոյց զԱստուած, որում մեղաւն։ Եւ ապա Վաչագան բարեպաշտ, զոր յիշեցաք ի վերոյ։ Սա լուաւ թէ զսուրբն Գրիգոր ընկեցին ի գուբն, հրամայեաց հանել զամենայն ոսկերսն՝ որ ի գբի անդ և հանեալ կուտեցին զնա շեղջս շեղջս։ Յաղօթս եկաց բարեպաշտ արքայն առ Աստուած. զի յայտնեցէ զոսկերս սրբոյն Գրիգորի. և ել հողմ սաստիկ, և ցանեալ ցրուեաց զամենայն ոսկերսն ընդ երեսս դաշտին, բայց յոսկերաց սրբոյն Գրիգորի։ Եւ բարձեալ արքայի մեծաւ պատուով, գոհանալով զԱստուծոյ բաշխեաց ամենայն երկրին իւրոյ։ Սպա սուրբն Նուփհադիշոյ եկաց եպիսկոպոս։ Բայց վասն առնս այսորիկ յառաջ կարգելոյ երկմտութիւն զոյ մեզ, զի որ գրեաց զպատմութիւն Աղուանից, զայս անուանս կարգէ յաւուրս Վաչա-